№ 73 Ապրիլ 25 (Մայիսի 7) 1881 Ապրիլ 25 (Մայիսի 7) № 73

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբ. կէս տարվանը 6 ռուբ. Առանձին համարները 5 կոպէկով:
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
[illegible] ղրկել են ալ հասցէով
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Սուտ կօսմօպօլիտներ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ծանուցում. Նամակ Բագուից. Նամակ Խարբերդից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ֆրանսիա. Անգլիա. Նամակ Բերլինից.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՍՈՒՏ ԿՕՍՄՕՊՕԼԻՏՆԵՐ

Մենք ոչինչ այնքան զզուելի չենք ճանաչում, որքան մեր համալսարանական ինտելլիգենցիայի մի մասի հայեացքները ազգութեան վրա: Մեր համալսարանական ինտելլիգենցիայի մի յայտնի մաս կամ կատարելապէս անտարբեր է դէպի ամեն տեսակ մտաւոր կեանք, կամ երբ սկսում է ապրել մտաւոր կեանքով, այն աստիճան ինքնահաւանութեան է հասնում, որ սկսում է ուրանալ ազգութեան նեղ գաղափարները, իրան մտաւորապէս անչափ զարգացած համարելով սկսում է արհամարհանքով նայել ազգային գաղափարի վրա և յայտնում է իրան կօսմօպօլիտ:

Բայց ցաւն այն է, որ այդ տեսակների կողմից իրանց կօսմօպօլիտ յայտնելը մի դիմակ է միայն, որի տակ ծածկվում են ամենաստոր շահասիրական և եսական նպատակները: Ցաւն այն է որ նրանք չեն էլ հասկանում ի՞նչ բան է կօսմօպօլիտութիւնը, ընդունակ չեն հասկանալ որ իսկական կօսմօպօլիտութիւնը ամենաբարձր, ամենազնիւ գաղափար է....

Իսկական կօսմօպօլիտը այն աստիճան ջերմ կերպով սիրում է ընդհանուր մարդկութիւնը, որ մարդկութեան ընդհանուր երջանկութեանը ձգտելու համար անհրաժեշտ է համարում սիրել և իր ազգութիւնը, քանի որ իր ազգութիւնը նա ճանաչում է ընդհանրութեան մի մասը, ամբողջ մարդկային մարմնի մի անդամ: Մտաւորապէս, բարոյապէս և տնտեսապէս զարգացնելով իր ազգութիւնը, աճ տալով նրա անհատական ազատ, նրա մայրենի լեզուին, նրա գրականութեանը, նրա զարգացմանն և այլն—բան կօսմօպօլիտը շատ լաւ գիտէ որ օգուտ է տալիս և ամբողջ մարդկութեանը: Օգուտ բերելով իր ազգին, նա օգուտ է բերում և ամբողջ մարդկութեանը: Այդ պատճառով իսկական կօսմօպօլիտը պէտք է լինի և ջերմ ազգասէր:

Բայց ինչ գաղափարների ենք հանդիպում մեր մի քանի համալսարանական լուսաւորեալների մէջ: «Ի՞նչ է պէտք ինձ մայրենի լեզուն, քանի որ նա գործադրութիւն չէ գտնում հասարակական կեանքի մէջ» ասում են մեր կօսմօպօլիտները: Բայց այդ խօսքերի բուն նշանակութիւնը այս է. «ի՞նչ է պէտք ինձ հայերէնը, քանի որ նա ինձ հաց չէ տալիս»:

Սրանից զրահով այդ լուսաւորեալ կարծեցեալը, այդ կօսմօպօլիտ իրան ցոյց տուող հայ ուսումնականը իր այդ խօսքերով իրան մատնում է. գրանով նա ցոյց է տալիս որ նա բուն հայ է, ինչքան էլ իրան կօսմօպօլիտ ցոյց տայ, որովհետև նրա համար ամեն բան փողով է չափվում, մինչև անգամ սէր դէպի ազգութիւնը, դէպի մայրենի լեզուն, դէպի ամենաբարձր, ամենազնիւ իդէալները....

Այս գրանք համալսարանականներ են համարվում...

Փոքր աշխարհիս երեսին հայերի պէս ոչ մի ազգութիւն չը կայ, որ այն ժամանակ է սովորում միայն իր մայրենի լեզուն, երբ նա հաց է տալիս: Համարձակ կարելի է ասել որ ոչ մի ազգութիւն չը կայ որ մեր ինտելլիգենտ կօսմօպօլիտ հայերի պէս ասէ՝ «ես հայերէն կը սովորեմ եթէ նա հաց կը տայ ինձ, բայց եթէ չինարէնը ու եսկիմոսերէնը ինձ հաց կարողանայ տալ, այն ժամանակ ես կը նախադասեմ այդ լեզուների ուսումնասիրութիւնը, և ինձ նեղութիւն չեմ կրի հայերէն սովորելու:»

Դա չէ նշանակում կօսմօպօլիտ լինել, բայց նշանակում է ոչ մի ազգութեան չը պատկանել: Իսկական կօսմօպօլիտը նախ և առաջ սիրում է ընդհանուր մարդկութիւնը և նոյն իսկ այդ պատճառով սիրում է իր ազգութիւնը, որովհետև ազգութիւնը ամբողջ մարդկութեան մասն է, նրա կտորն է, որին նա կը կամենար երջանիկ, անհատապէս զարգացած տեսնել, որպէս զի նա կարողանայ ընդհանուր մարդկային ամենաբարձր ձգտումների մէջ մասնակցել:

Իսկ մեր լուսաւորեալ հայը թքում է ամբողջ մարդկութեան վրա էլ, ազգութեան վրա էլ.... Նրա համար թանգ է միայն իր անձնական շահը: Այսօր նա պատկանում է մի ազգութեան, վաղը մի ուրիշին և երկուքը ոչ մէկին:

Մի մարդ որ չէ սիրում ընդհանուր մարդկութիւնը,—չէ կարող սիրել և իր ազգութիւնը ու նրա համար արդիւնաւոր կերպով աշխատել: Ուրիշ կողմից այն մարդը որ արհամարհում է իր ազգութիւնն ու մայրենի լեզուն, պատրաստ է ծախել իր անձը ամեն մի ազգութեան, որ նրան նիւթական աւելի շահ է խոստանում,—այդ տեսակ մարդ չէ կարող սիրել և ընդհանուր մարդկութիւնը ու նրան պիտանի լինել, ուրեմն անարժան է կօսմօպօլիտի ազնիւ կոչումը կրելու:

Ազգութիւնը անհատութիւն է: Իսկ անհատապէս անզարգացած, անկիրթ մարդ չէ կարող պիտանի լինել ամբողջ հասարակութեանը:

Ի՞նչ պէտք է սովորի հայ ամբոխը մեր բարձր ուսում ստացածներից, երբ լուսաւորեալ հայը իր նիւթապաշտութիւնը, իր շահասէր, եսական, ծախվող ոգին ծածկում է կօսմօպօլիտի ազնիւ դիմակի տակ:

«Ազգութիւնը ստեղծված է յիմարների համար, ասում է գիտնական հայը, իսկ ես բարձր եմ ազգութեան նեղ գաղափարից, ես մարդկութեան քաղաքացի եմ:»

Բայց խաբեբան կարծում է որ մենք չենք հասկանում թէ անկարելի է մարդկութեան անդամ լինել, առանց նախ և առաջ մի որ և է ազգութեան անդամ լինելու:

Մենք այնքան միամիտ չենք որ խաբվենք և շատ լաւ ենք հասկանում այդ խօսքերի իմաստը: «Ազգութիւնը և մայրենի լեզուն, հայութիւնը և հայրենիքը ինձ հաց չեն տայ» ահա մեր բարձր ուսում ստացած ինտելլիգենցիայի բարոյական նշանաբանը:

Այս չը մոռանանք որ այդ տեսակ անպիտանները ազդում են գլխաւորապէս մեր հասարակութեան վրա, մեր կանանց և աղջիկների վրա, որոնք մայրեր դառնալով նոյն գաղափարները ներշնչում են և նոր սերունդին:

Այս աչքա մի գեղեցիկ տեսարան. մի ամբողջ ազգութիւն, պատկառելի ծերունից սկսած մինչև քնքոյշ օրիորդը, վաճառականներից է բաղկացած, որոնց մօտ ամեն բան փողով է գնահատվում, մինչև անգամ մայրենի լեզուն և ազգութիւնը:

Հայ լինելը ինձ հաց չէ տալիս,—թքեմ ես հայութեան վրա: Ահա հայ լուսաւորեալների բարձր վարդապետութիւնը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պետական կալուածների մինիստրի, գիւղատնտեսական և արդիւնագործութեան գործերի վարչութիւնը, հարկաւոր է համարում ծանուցանել ի գիտութիւն հասարակութեան, որ Մոսկվա քաղաքում լինելու արուեստագործական հանդէսը (վիստավկա) Նորին կայսերական Մեծութեան հրամանով յետաձգված է մինչև ամառւան 1882 տարին և այս պատճառով վիստավկայի համար կազմված օժանդակ կոմիտէտը խնդրում է ձեռագործները և այլ և այլ ապրանքները ուղարկող պարոններին [illegible] և այլ ես չուղարկեն ոչ Մոսկվա քաղաքը, ոչ էլ Թիֆլիսի օժանդակ կոմիտէտին:

Այնուհետև, վիստավկայի բացման ժամանակին, մի առ մի տեղեկութիւններ կը տրվին հանդէսին ապրանքները ուղարկելու կարգի մասին առանձին յայտարարութեամբ:

Պետական կալուածների վարչութիւնը գիտէ է այն բոլոր անձանց, որոնք արդէն ստացրել են առաջվայ յայտարարութիւնը կոմիտէտի գործունէութեան մասին, խնդրելով որ նրանք ստացրին և նորից ծանուցանեն.

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Ապրիլի 17 ին

Շատ ցաւում եմ «Մշակի» ընթերցողներին հաղորդել մի գլխաւոր. Այսօր չորրորդ օրն է որ առաւ արևմտաւոր [illegible] քաղաքի հայերի [illegible] Թուրքերի [illegible] ոչ որ չէ կարողանում [illegible] մինչև անգամ նոյն իսկ [illegible]. Բայց [illegible] թէ [illegible] մի առա [illegible] մի Թուրքի [illegible] [illegible] Թուրք [illegible]. Այդ ժամանակ մի առա արևմտաւոր, որ Ներկայ է լինում, [illegible] է Թուրք [illegible] վրա, իսկ վերջինի ընկերները սկսում են պաշտպանել նրան և [illegible] կռիւ երկու կողմից էլ [illegible]: Ներկայ գտնված հայերը [illegible] են [illegible]: [illegible] շատ [illegible] [illegible] է. [illegible] է [illegible]. Այդ [illegible] [illegible], որոնք [illegible] [illegible] են [illegible] վրա և սկսում են [illegible] [illegible], [illegible] ընկերները [illegible]. Միւս օրը [illegible] [illegible], որ [illegible] [illegible] է, բայց [illegible] և հայերը չը [illegible].